ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ /Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

30.08.2023թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ VIIIբ

ԴԱՍՂԵԿ՝ Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հրազդանի N2 հիմնական դպրոցի 8-րդ դասարանը համալրված է երեսուն աշակերտով՝21 աղջիկ , 10 տղա: Տիրապետում են նախնական գիտելիքների , կազմակերպված են, աշխույժ: Դասարանում ձևավորված է առողջ դասարանական կոլեկտիվ,որտեղ հարգվում են բոլորի իրավունքները: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ակնհայտ է դառնում, որ մի շարք դժվարություններ են ի հայտ գալիս, որոնց լուծման համար անհրաժեշտ է լինել համբերատար, զգոն և հետևողական: Սակայն դասարանում տիրում է միմյանց զիջելու և փոխըմբռնելու ունակություն: Համախմբված է,ակտիվ է,մասնակից է համադպրոցական բազմաբնույթ միջոցառումների: Ուստարվա սկզբին կրթադաստարակչական աշխատանքները սկսվեցին աշակերտների մոտ տարիքային փոփոխությունների ուսումնասիրմամբ:Այդ նպատակով անցկացվել են ծնողական ժողովներ,զրույցներ աշակերտների հետ՝նպատակ ունենալով սերմանել սեր և հարգանք միմյանց նկատմամբ,ինչպես նաև հետևել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:

Իմ նպատակն է աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, մաքրասեր, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, քաղաքացիականության և ուսման կարևորության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը:

Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են և ունեն իրենց առանձնահատկությունները: Տղաները բռնկուն են, աղջիկները՝ավելի շատ զուսպ:

Լիահույս եմ, որ այս կոլեկտիվը կդառնա համագործակցող, աշխատասեր , փոխօգնության պատրաստ ամուր ընտանիք:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական, բարոյական

Խնդիրները՝

Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ, խթանել բարոյական վարքի ձևավորմանը:

Հոգևոր դաստիարակություն

Խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակություն

Խնդիրները՝

Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ինչպես նաև ստեղծելու կարողություններ:

Ֆիզիկական առողջության

Խնդիրները՝

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների բացասական ազդեցությունների գիտակցում և օրինակելի վարքագծի դրսևորում, ֆիզիկական կոփմանն ուղղված միջոցառումների նախաձեռնում:

Աշխատանքային դաստիարակություն

Խնդիրները՝

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Իրավական դաստիարակություն

Խնդիրները՝

Ձևավորել սեփական իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու կարողություններ:

Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

Էկոլոգիական դաստիարակություն

Խնդիրները՝

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	<<Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի ու դպրության օր >>: <<Նախորդ ուս. տարվա արդյունքների վերլուծություն>>: <<Նոր ուս. տարվա անելիքների ծրագրում>>:	04.09.2023
2.	Աշակերտական խորհրդի ընտրություն: 2023-2024 ուս. տարվա դպրոցի ներքին կարգապահական կանոնների ընթերցում և քննարկում:	11.09.2023
3.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար: Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, հիմն:	18.09.2023
4.	Ի՞նչ տվեց մեզ Հայաստանի անկախացումը: Զրույց <<Հայրենիքը անկախ է և ազատ >>թեմայով:	25.09.2023
5.	<<Ուսուցիչ: Ո՞վ է նա >>: <<Ուսուցիչ, որին ես շնորհակալ եմ, այն բանի համար, որ նա ... >>:	02.10.2023
6.	Թարգմանչաց տոն: <<Գրից մինչև գիրք և տպագրություն>>:	09.10.2023
7.	Մաքուր պահենք մեր շրջապատը: Վատ սովորություններ: Ի՞նչպես պայքարել դրանց դեմ:	16.10.2023
8.	Քարոզարշավ՝ թմրանյութեր, ալկոհոլ, ծխախոտ:	30.10.2023
9.	Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ դասարանում:Աշակերտ. Կոլեկտիվի համախմբումը:	06.11.2023
10.	Աշակերտների հետաքրքրություններն ու նախասիրությունները: Ինչպես են սիրում անցկացնել իրենց ազատ ժամանակը:	13.11.2023
11.	Կազմակերպել աշակերտական փոխօգնություն ուսման գործում:	20.11.2023
12.	Ինքնաբացահայտում՝ <<Իմ անունը>>, <<Իմ հույզերը>>:	27.11.2023
13.	Բնական աղետները և դրանց տեսակները: Ներկայացնել բնական աղետների պատճառները և հետևանքները: Սպիտակի երկրաշարժ:	04.12.2023
14.	Կլոր սեղան: Ապրենք առողջ:	11.12.2023

	Ի՞նչ է առողջությունը: Խուսափենք անառողջ սովորություններից: Ի՞նչ գիտենք դեղերի մասին:	
15.	Ուրախ դիմավորենք ամանորը: Ամանորյա միջոցառումների նախապատրաստում:	18.12.2023
16.	I կիսամյակում սեփական անելիքների գնահատում: II կսամյակի աշխատանքների պլանավորում:	08.01.2024
17.	<<Ինչպիսին եմ ուզում լինել, եթե ...>>	15.01.2024
18.	<< Ես քո զինվորն եմ Հայաստա՞ն>>: <<Հայի ոգին անպարտելի է>>:	22.01.2024
19.	<<Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը>>:	29.01.2024
20.	Մայրենիի միամսյակ:	05.02.2024
21.	Նախապատրաստվել գիրք նվիրելու օրվան: Գիրքն իմ կյանքում:	12.02.2024
22.	Զրույց <<Հասարակություն և ընտանիք>>թեմայով:	19.02.2024
23.	Ի՞նչ է ընկերությունը: Իմ ընկերները:	26.02.2024
24.	Կանանց միջազգային տոն: Մարտի 8:	04.03.2024
25.	Մշակութային տարբերություններ: Երկրներ, որտեղ կցանկանայի լինել	11.03.2024
26.	Ինչպես եմ պատկերացնում ապագաս:	18.03.2024
27.	<<Մեր ժամանակի հերոսները>>խորագրով զրույց:	01.04.2024
28.	Զրույց <<Հայրենիքը մարդ պետք է կրի իր հոգու մեջ, իր էության մեջ>> թեմայով:	08.04.2024
29.	Մարդու ինքնուրույնությունը: Ինչպե՞ս է այն արտահայտվում:	15.04.2024
30.	<<Հայոց մեծ եղեռն>>աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	22.04.2024
31.	Մայիսյան հաղթանակների միջոցառումների շարք:	29.04.2024

32.	Մեր դպրոցի շնորհալիները:	06.05.2024
33.	Ուխտագնացություն: Էքսկուրսիայի նախապատրաստում:	13.05.2024
34.	2023-2024 ուս. տարվա ձեռքբերումների և բացթողումների ամփոփում:	20.05.2024

Բնության արժնորում և հոգատար վերաբերմունքի ձևավորում:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Խնդիրները՝

Ձևավորել հայրենիքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք՝ հիմնված անվերապահ սիրո և հարգանքի վրա, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ, ձգտում՝ կատարելու հայրենանվեր քայլեր:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	<<Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի ու դպրության օր >>:	01.09.2023
2.	<<Շնորհավոր տոնդ, իմ սրտի ուսուցիչ>>	05.10.2023

Ծնողական ժողովներ

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1	ՕՐԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՕՐԱԿԱՐԳ 1.Խոսել նոր սկսվող ուստարվա, գրքերի վարձակալման հիմունքների մասին: 2.Ծանոթացնել դպրոցական նորություններին և խնդիրներին: 3.Ծնողների հետ զրուցել աշակերտների տարիքային առանձնահատկությունների մասին: 4.Ծնողներին ներգրավել աշակերտների հետ տարվող աշխատանքներում: 5.Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն: 6.Ընթացիկ հարցեր:	19.09.2023